

**ՔՆԱՅԻՆ ՉԱՐԿԵՐԱԿՆԵՐԻ ՈՒՆՏՐԱԶԱՅՆԱՅԻՆ
ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՇԵՄԻԿ ԵՎ ՈՉ
ԻՇԵՄԻԿԿԱՐԴԻՈՄԻՈՊԱԹԻԱՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԱՆՏՈՐՈՇՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ**

Սենան Մ.

Հոմեոպատիայի ազգային ինստիտուտ, Կալկաթա, Հնդկաստան

Կարդիոլոգիայի կարևորագույն խնդիրներից է ասիմպտոմ իշեմիկ կարդիոմիոպատիաների տարբերակիչ ախտորոշումը ոչ իշեմիկ դիլատացիոն կարդիոմիոպատիայից: Հայտնի է, որ քնային զարկերակների բիֆուրկացիայի աթերոսկլերոզը և պսակածն զարկերակների հիվանդությունը խիստ փոխկապակցված են: Հետևապես մեր կողմից կատարված հետազոտության նպատակն էր՝ գնահատել քնային զարկերակի արտագանգային աթերոսկլերոզի արտահայտվածության տարբերությունները իշեմիկ և ոչ իշեմիկ էթիոլոգիայի կլինիկորեն անբացատրելի կարդիոմիոպատիաներով հիվանդների միջև:

Ուսումնասիրության ժամանակ 48 ամսվա ընթացքում հետազոտվել են 117 հիվանդ՝ ձախ փորոքի չբացահայտված լայնացումով և կծկողականության դիֆուզ խանգարումներով: Բոլոր հիվանդներին կատարել են քնային զարկերակների ուլտրաձայնային հետազոտություն և պսակածն զարկերակների արտերիոգրաֆիա: Գրեթե բոլոր իշեմիկ կարդիոմիոպատիայով հիվանդների մոտ հայտնաբերվել է քնային զարկերակների աթերոսկլերոզ, ոչ իշեմիկ կարդիոմիոպատիայով հիվանդների մոտ՝ հայտնաբերվել է եզակի դեպքերում: Ակնհայտ է քնային զարկերակների ուլտրաձայնային հետազոտության արդյունավետությունը չբացահայտված էթիոլոգիայով կարդիոմիոպատիաներով հիվանդների մոտ՝ տարբերակիչ ախտորոշման նպատակով: Քնային զարկերակների աթերոսկլերոզով հիվանդները հնարավոր է ունենան նաև պսակածն զարկերակների տարբեր հիվանդություններ: Քնային զարկերակների անգիոգրաֆիան կարելի է համարել վաղ ախտորոշման եղանակ և ճիշտ հակառակը՝ հետազոտության բացասական արդյունքները կանխատեսում են ոչ իշեմիկ կարդիոմիոպատիան: